

Ն ե ր ա ծ ու թ յ ու ն

Արմստատի «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը» տեղեկատվական ամսական զեկույցները կառուցվում են ՀՀ վիճակագրության պետական խորհրդի կողմից հաստատվող վիճակագրական տարեկան ծրագրերով նախատեսված ճյուղային (գերատեսչական) և տեղական (համայնքային) վիճակագրություն իրականացնող մարմինների, վիճակագրական այլ տեղեկություններ տրամադրողների կողմից ներկայացվող վիճակագրական հաշվետվությունների (հարցաթերթերի, տեղեկագրերի և այլն), հաշվարկների և Արմստատի կողմից դրանց ամփոփման, ինչպես նաև Արմստատի կողմից մշակվող ցուցանիշների, իրականացվող հետազոտությունների, տեղեկատվա-հրատարակչական գործունեության արդյունքում ամփոփված նյութերի հիման վրա (ժողովածուներ, տեղեկագրեր, մամուլի հաղորդագրություններ, վիճակագրական զեկույցներ):

1999թ. ապրիլից սկսած, զեկույցների բովանդակությունը ներկայացվում է Արժույթի միջազգային հիմնադրամի (ԱՄՀ) կողմից մշակված՝ «Տվյալների տարածման ընդհանուր համակարգի» հատվածներին համապատասխան, որոնք համընկնում են ԱՄՀ «Տվյալների տարածման հատուկ ստանդարտ»-ի հատվածներին վերաբերող պահանջների հետ:

Տեղեկատվական ամսական զեկույցներն ամսական պարբերականությամբ ներկայացվում են հակիրճ, իսկ եռամսյակային պարբերականությամբ՝ առավել մանրամասն, ընդլայնված ու ընդհանրական:

Եռամսյակային զեկույցներում ընդգրկվում է «Մեթոդաբանական պարզաբանումներ» հավելվածը, որում հակիրճ ներկայացվում են հիմնական մակրոտնտեսական ցուցանիշների բնութագրերը, հաշվարկման մեթոդաբանությունը:

Ջեկույցներում արտացոլված, ինչպես նաև վիճակագրական այլ տեղեկությունները զետեղվում են Արմստատի <http://www.armstat.am> և <http://www.armstatbank.am> պաշտոնական կայքերում:

ԱՄՀ «Տվյալների տարածման հատուկ ստանդարտ»-ին (որին 2003թ. նոյեմբերի 7-ից անդամակցում է նաև Հայաստանի Հանրապետությունը) համապատասխան՝ ԱՄՀ ստանդարտների տարածման տեղեկագրում՝ <http://dsbb.imf.org/Applications/web/dsbbhome/> առկա է անգլերենով Հայաստանի վիճակագրության համապարփակ մեթոդաբանությունը, իսկ նույն ստանդարտի Արմստատի կողմից վարվող Ազգային ամփոփ տվյալների էջում <http://docs.armstat.am/nsdp/> առկա են երկրի համապատասխան տվյալները:

«Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը» տեղեկատվական ամսական զեկույցների օրինակները պահպանվում են Արմստատի գրադարանում:

Պայմանական նշաններ

երևույթը բացակայում է	-
տվյալներ չկան	...
չնչին մեծություն	0.0
ցուցանիշը չի հաշվարկվում	X
տվյալները ճշգրտված են	◇

Առանձին դեպքերում բաղադրիչների գումարի և արդյունքի միջև աննշան տարբերությունները բացատրվում են տվյալների կլորացմամբ: